

տի լինի ահա՛ ոչ միայն ջանալ պահել եւ շատացնել նպաստող արտաքին ազդակները, այլ եւ խափանել, վերացնել աննպաստները եւ, եթէ հնարաւոր է այդ վերջինները մինչեւ իսկ նպաստաւոր դարձնել իր համար:

Ռուսաստանի մասին խօսեցինք արդէն: Չծանրանանք աւելի հեռաւորների վրայ: Վերառնենք միայն Անգլիան, որ Ռուսաստանի հետ միասին եւ նրան համահասարակ վճարական, երբեմն մինչեւ իսկ ճակատագրակա՛ն դեր է խաղացել մեր հարցում:

Հայ Գատի պատմութիւնը ցոյց է տալիս, որ նրա անյաջողութիւնները, նրա կրած պարտութիւնները մեծագոյն մասով այդ երկու հզօր, աշխարհակալ պետութիւնների հակամարտութեանց հետեւանք են: Երկուսն էլ դաւել ու դաւադրել են մեզ մի ամբողջ յինամեակի ընթացքում, սկսած Սան-Սաեֆանօից մինչեւ Լօղան: Անգլիան աւելի, մեր կարծիքով, քան Ռուսիան:

Մի կարճ միջոց միայն, 1918-1920, անդլիական արեւելեան քաղաքականութիւնը նրպաստաւոր ընթացք առաւ մեզ համար, այլապէս նա միշտ էլ Պրիլատոսի դերում է եղել Հայաստանի հանդէպ, հարկաւ՝ որպէս Ռուսաստանի սոսիս: Վերջին անգամին էլ, 1920-21ին, կարմրած Ռուսաստանը մեզ զոհ բերաւ իր հակադլիական քաղաքականութեան, մեր կիսակենդան մարմնի վրայով ձեռք մեկնելով Տաճկաստանին:

Բաղդատարար տանելի վիճակ ստեղծուեց մեր երկրի ու ժողովուրդի համար 1907-1917ի տասնամեայ միջնարարին, երբ երբեմնի սոսիսները համաձայնութեան եկան, ընդդէմ ընդհանուր հակառակորդի՝ Գերմանիայի: Այդ միջոցին էր, որ մշակուեց ու ընդունուեց նաեւ Տաճկա-Հայաստանի բարեփոխութեանց ծրագիրը (1914, յունուար), որ սակայն համաշխարհային պատերազմը եկաւ սրբեց:

Եւ որչափ երկա՛ր տեւի անգլօ-ռուս հակամարտութիւնը, այնքան վատ՝ փոքրիկ Հայաստանի համար: Մի ուրիշ դժբախտ օր եւս կարող է այդ հակամարտութիւնը ուժգնորէն շղթայազերծուիլ ու նորէ՛ն գոռ մարտի թատր դարձնել Հայաստանը, կրկին աւերակների կոյտեր ստեղծել այնտեղ: Ի՛նչ տարակոյս, որ

այդ երկու՝ հաւասարապէս աշխարհակալ, սոսիս պետութիւնների վճարական մարտին հրապարակ պիտի նետուին ուրիշ ոյժեր եւս. ոյժեր, որոնք յարմար առիթ են որոնում՝ սոսիս տակ տալու մեր երկիրը:

Ահա թէ ինչու մեծապէս վտանգաւոր են, դարձեալ մեր շահերի տեսակէտից, այն ուղմաշունչ ճառերը եւ յոխորտանքները, որ խորհրդային աշխարհակալութեան հայ դործակալները օրն ի բուն վնչում են բրիտանական աշխարհակալների հասցէին: Առնուազն 1-2 սերունդ հանդիստ եւ խաղաղութիւն վայելելու անհրաժեշտութիւնն ունի Հայաստան՝ ազգայնապէս եւ տնտեսապէս կազդուրուելու, նոր ոյժեր հաւաքելու համար:

Վասնզի ո՛չ միայն անհնար չէ, այլ եւ հաւանական է խիստ, որ եթէ ոչ վաղը, բայց յաջորդ օրը անպայմա՛ն՝ համաձայնութեան դայ Անգլիան Տաճկաստանի հետ եւ, այսպիսով, ռուս-անգլիական մի նոր դօտեմարտի մէջ Տաճկաստանը եւս խառնուի:

Հասկանալի է նաեւ, թէ նման պարագայի նրանից, Տաճկաստանից դուրս մեզ չըջապատող ուրիշ ի՛նչ ոյժեր եւս պիտի մասնակցութիւն բերեն ընդհանուր պայքարին: Հասկանալի է այն եւս, որ այդ զէպքում Հայաստանը նորէն ռազմաբեմ պիտի դառնայ իր համար բոլորովին օտա՛ր նպատակների ու խորթ պայքարի, կրկին անդամ մահացուօրէն ստան կոխան լինի մեր արիւնքամ հայրենիքը:

Լա՛ւ, եթէ բախման միջոցին Տաճկաստանը Ռուսիոյ կողքին լինի, շարունակելով մնալ նրա դաշնակիցը: Այդ պարագային դէթ մեր երկիրը դուրս կը մնայ կռուի անմիջական շրջանակից եւ Անգլիոյ հաւանական յաղթութեան պարագային Հայաստանի եւ հայ ժողովուրդի կրկնակի թշնամիները, թորհրդային Ռուսիա եւ Թուրքիան, տապալուելով միասնաբար՝ նրանց աւերակների տակից էլ թերեւս հայութիւնն ու Հայաստանը եւս տէր դառնան իրենց իրաւունքին:

Եւ սակայն մենք պարտաւոր ենք նախատեսել եւ առաջին հնարաւորութիւնը, որով եւ պէտք է վարել մեր ազգային քաղաքականութիւնը մի այնպիսի հունով, ուր ըստ հնարաւորին պակաս լինին խութերը: